ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հրազդան համայնքի ավագանու 09 դեկտեմբերի 2022 թվականի N 252-Ն որոշմամբ հաստատված 2023 թվականի բյուջեն եկամտային մասով հաստատվել է 2883209.8 հազար դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 4083534.9 հազար դրամ (ճշտված բյուջե):

Ճշտված պլանի նկատմամբ փաստացի կատարողականը կազմել է 3637915.7 հազար դրամ կամ բյուջեն կատարվել է 89.09%:

Հաշվետու տարում բյուջեի հավաքագրած եկամուտների 45.1 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 54.9 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների հաշվին (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1



1. Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 29953.99 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 0.82 %-ը: Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի մեջ ներառված՝

- ✓ հողի հարկի գումարը (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 12364.9 հազար դրամ՝ գերակատարվելով 2464.9 հազար դրամով
- ✓ գույքահարկ շենք-շինությունների համար (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 17589.0 հազար դրամ՝ գերակատարվելով 9339.0 հազար դրամով

- ✓ անշարժ գույքի միասնական հարկը կազմել է 113041.4 հազար դրամ՝ թերակատարվելով 9278.6 հազար դրամով:

2. Գույքային հարկեր այլ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 397298.2 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 10.9 %-ը:
3. Տուրքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 69289.3 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 1.9 %-ը:
4. Տեղական վճարների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 224985.4 հազար դրամով՝ ապահովելով համայնքի բյուջեի եկամուտների 6.2 %-ը:
5. Գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 43105.0 հազար դրամով՝ ապահովելով համայնքի բյուջեի եկամուտների 1.2%-ը:
6. Պաշտոնական դրամաշնորհների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 1996316.9 հազար դրամով՝ կատարվելով 54.9 %-ով:
7. Այլ եկամուտների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 122963.5 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 3.38 %-ը:
8. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 531173.0 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 14.6 %-ը:
9. Բյուջեի 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 109789.1 հազար դրամ:

2023 թվականի բյուջեն ծախսային մասով հաստատվել է 2883209.8 դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 4083534.9 դրամ (ճշտված բյուջե): Փաստացի կատարողականը կազմել է 3396877.3 հազար դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 83.2 % կամ նախատեսված ծախսերից պակաս է կատարվել 686657.6 հազար դրամ (Գծապատկերներ 2, 3):

Գծապատկեր 2



Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին է հատկացվել ընթացիկ ծախսերի 13.85 %-ը, որը կազմում է 470589.7 հազար դրամ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը (էներգետիկ ծառայություն, կոմունալ ծառայություն, կապի ծառայություն, ապահովագրական ծախսեր, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռքբերում, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, նյութերի ձեռքբերում) հատկացվել է 257297.8 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 7.58 %-ը, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին սուբսիդիաների տեսքով հատկացվել է բյուջեի եկամուտների 28.60 %-ը, որը կազմում է 971446.7 հազար դրամ, որպես դրամաշնորհ՝ հատկացվել է 27160.9 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 0.8 %-ը: Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ հոդվածին

հատկացվել է 94398.3 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 2.78 %-ը, այլ ծախսերին է հատկացվել ընթացիկ ծախսերի 0.37 %-ը՝ 12700.0 հազար դրամ:

Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 46.02 %-ը կամ 1563283.9 հազար դրամ հատկացվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Գծապատկեր 3



Ընդհանուր ծախսերի կատարման իրական պատկերը ստանալու համար վերլուծենք ծախսերն ըստ գործառնական դասակարգման.

-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

2023թ. համայնքային բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի ծախսերը կազմել են 428541.3 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 12.62 %-ը: Ոլորտի ծախսերի 83.8 %-ը՝ 358935.4 հազար դրամ, ուղղվել է աշխատակազմի և «Վարչական շենքի սպասարկման և պահպանման» հիմնարկի սպասարկման և պահպանման ծախսերին, 21759.7 հազար դրամը ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: 11.2 %-ը՝ 47846.2 հազար դրամ՝ «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների և հուշարձանների պահպանման, շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

-Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հաշվետու տարում հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն ոլորտին համայնքի բյուջեից 1029.4 հազար դրամ, որը կազմել է ընդհանուր ծախսերի 0.03 %-ը:

-Տնտեսական հարաբերություններ

Հաշվետու տարում ընդհանուր ծախսերի 25.16 %-ը ուղղվել է համայնքում տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս ոլորտում ներառված ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նախատեսված 623049.8 հազար դրամի դիմաց կազմել է 531173.0 հազար դրամ՝ կատարվելով 85.3 %-ով: 736096.6 հազար դրամ ուղղվել է Հրազդան համայնքում ճանապարհների կապիտալ հիմնանորոգմանան աշխատանքներին:

- Շրջակա միջավայրի պաշտպանություն

2023թ. շրջակա միջավայրի պաշտպանության համար համայնքի բյուջեից հատկացվել է 344314.1 հազար դրամ, որից 341314.1 հազար դրամը կամ այդ բնագավառի համար հատկացված ծախսերի 99.1 %-ը հատկացվել է «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը և «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկին, 3000.0 հազար դրամը՝ շների ստերջացման աշխատանքների համար: Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտին է հատկացվել ընդհանուր ծախսերի 10.14 %-ը:

-Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտին համայնքի 2023թ. բյուջեից հատկացվել է 143474.7 հազար դրամ, որից 61084.1 հազար դրամը կամ այդ բնագավառի համար հատկացված ծախսերի 42.6 %-ը հատկացվել է «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, իսկ 47728.5 հազար դրամը՝ փողոցների լուսավորության համակարգի պահպանման, շահագործման աշխատանքների կատարմանը: Փողոցային լուսավորության աշխատանքների համար հատկացվել է 5500.0 հազար դրամ: 9960.3 հազար դրամ հատկացվել է Հրազդան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների համար թիթեղի և իզոգամի ձեռքբերմանը, 7999.2 հազար դրամ հատկացվել է Հրազդան համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքների համար, 1678.0 հազար դրամ հատկացվել է սեյսմիկ փորձաքննության աշխատանքների կատարմանը, իսկ 985.0 հազար դրամն ուղղվել է խորքային պոմպի ձեռքբերմանը:
Այս բնագավառին ուղղվել է ընդհանուր ծախսերի 4.22 %-ը:

-Հանգիստ, մշակույթ և կրոն

2023թ. այս ոլորտին է հատկացվել տարեկան ծախսերի 3.48 %-ը՝ 118292.8 հազար դրամ: Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտին հատկացված միջոցներից Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու բեմի և սանհանգույցի կապիտալ հիմնանորոգման աշխատանքներին հատկացվել է 7967.9 հազար դրամ, 96884.1 հազար դրամ հատկացվել է «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն», «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, 1840.0 հազար դրամը՝ հասարակական կազմակերպություններին:

-Կրթություն

Կրթության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 44.08 %-ը՝ 1497290.7 հազար դրամ: Համայնքում գործող 4 մանկապարտեզների կապիտալ հիմնանորոգման և 1 մանկապարտեզի կոյուղու հիմնանորոգման աշխատանքներին է հատկացվել ոլորտի համար նախատեսված գումարի 49.1 %-ը՝ 735164.8 հազար դրամ, որից 219587.04 հազար դրամը՝ համայնքի միջոցների հաշվին, իսկ 512369.76 հազար

դրամը պետական բյուջեից ֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրերի հաշվին: Համայնքում գործող 15 նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանման ծախսերը կազմել են 519767.8 հազար դրամ: Արտադպրոցական հիմնարկների պահպանմանն է հատկացվել այդ ոլորտի համար նախատեսված գումարի 16.2 %-ը՝ 242043.2 հազար դրամ:

-Սոցիալական պաշտպանություն

2023թ. սոցիալական պաշտպանության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 0.27 %-ը, որի հիմնական ուղղությունը բնակչությանը տրամադրվող նպաստներն ու օգնություններն են, որը հաշվետու տարում կազմել է 9165.3 հազար դրամ:

Համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման նպատակով վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային բյուջե է հատկացվել 109349.8 հազար դրամ:

Եզրակացություն

Բյուջեի տարեկան կատարման մասին հաշվետվության համար հիմք են հանդիսացել 2023թ. համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ, համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների հաշվետվությունները:

Մեր կարծիքով վերոնշյալ հաշվետվությունները կազմված են «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքների, ֆիանանսների և էկոնոմիկայի նախարարի 9 հունվարի 2007 թ. N 5-Ն հրամանի պահանջներին համապատասխան և բոլոր առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկեր 2023թ. եկամուտների և ծախսերի վերաբերյալ: